«ԻՄԵԴԻ TV»-Ի ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻՑ

# ...ԵՎ ՊԱՏՄԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ «ԱՐԱՄՅԱՆՑԻ» ՀԱՅՏՆԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՀԻՄՆԱԴՐԻ ՄԱՍԻՆ



*Օրերս «Իմեդի» հեռուստաընկերության «Իմեդիս դիլա» հաղորդաշարն անդրադարձել է Միքայել Արամյանցի գործունեությանն իբրեւ Թբիլիսիի քաղաքաշինության մեծ ներդրողի ու մեկենասի: Բարի ու ջերմ ռեպորտաժում պատմվում է Արամյանցին պատկանող ամենահայտնի կառույցների, Թբիլիսիին գործուն սիրահար Մեկենասի կենսագրության ուրախ ու տխուր էջերի մասին... Կաեւորելով եւ արժեւորելով վրացական լրատվամիջոցներում նման նյութերի հանրայնացումը, «Վրաստան» թերթը թարգմանաբար ներկայացնում է Քեթեւան Բուդաղաշվիլու հեռուստառեպորտաժի բովանդակությունը:*

1919 թվականի մայիսի 14-ին Թբիլիսիում լույս տեսնող «Գրուզիա» ռուսալեզու թերթն իր քրեական լրահոսում մի փոքրիկ լրատվություն հրապարակեց՝ մարդու առեւանգման մասին, որտեղ ասվում էր. *«Այս թվի մայիսի 12-ին, սեփական տանից դուրս է եկել վաճառական Արամյանցը: Լերմոնտովի եւ Սերգիի փողոցների խաչմերուկում նա հարձակման զոհ է դարձել: Անհայտ անձինք նրան հրել եւ ավտոմեքենայի մեջ են գցել: Ապա անհայտ ուղղությամբ՝ անհետացել»:*

Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանում փորձում ենք այս պատմության շարունակությունը գտնել: «Էրթոբա» թերթի 1919 թ. հունիսի համարում կարդում ենք, որ քաղաքի ոստիկանությունը Միքայել Արամյանցին առեւանգողին գտել է դեպքից մեկ օր անց՝ դուրս գալով հանցավոր աշխարհի հայտնի ներկայացուցիչ՝ Ջանդուկելու հետքին՝ տեղում սպանելով նրան:

Ինչպես պարզվում է նման հրապարակումներն այդ տարիներին սովորական էին, բայց այս լրատվությունը դուրս էր սովորականի շրջանակներից, քանի որ գործը վերաբերում էր հայտնի վաճառական Միքայել Արամյանցին եւ, եթե քաղաքի ոստիկանությունը ճիշտ չաշխատեր, հնարավոր է այս մարդու անուն ազգանունը մեր օրեր չհասներ:

Ներկա իրականության ու մեր օրերի թոհուբոհում հաճախ չենք նկատում ու առավելեւս ծանոթանում քաղաքի պատմությանը: Ամեն օր անցնում ենք շինությունների կողքով՝ առանց իմանալու, թե ովքեր են հեղինակը վաղուց արդեն քաղաքի այցետոմսի եւ կամ՝ ձեւավորված թբիլիսյան պատմության: Նմանների թվում՝ Միքայել Արամյանցն է: Ահա Շոթա Ռուսթավելու պողոտան, այն ժամանակների Գոլովինի փողոցը: Հենց այստեղ Գոլովինի եւ Բարետինսկի փողոցների խաչմերուկում է որոշում Արամյանցն իր ազդեցիկ հյուրանոցը կառուցել: Առնում է մի շինություն, ուր հայտնի լուսանկարիչ Պետրե Գանկեւիչի արհեստանոցն էր գործում: Շինարարությունը սկսվում է 1913 թվականին: Արդեն 1915-ին Ռուսթավելու պողոտան զարդարում էր կլորավուն ճակատով «Մաժեստիկ» հյուրանոցը: Այդ տարիների մամուլը գրում էր, որ «Մաժեստիկն» ամբողջ Ռուսական կայսրության տարածքում միակ կլորաճակատ կառույցն էր: 1916 թվականին, Փարիզում կայացած միջազգային ցուցահանդեսին, «Մաժեստիկն» արժանանում է Ոսկե մեդալի՝ որպես լավագույն հյուրանոց:

***- Կառույցի ճարտարապետը Գաբու Տեր-Մելիքովն էր,- պատմում է հեռուստամեկնաբան, գիդ Զուրա Բալանչիվաձեն,- ով Արամյանցի հանձնառությամբ եւ միջոցներով հատուկ վերապատրաստվել էր Եվրոպայում, որպեսզի հենց այս հրաշք հյուրանոցը կառուցեր: Մաժեստիկ ֆրանսերեն հենց այդ իմաստն էլ ունի՝ հրաշալի, հիանալի...***

Նախքան իր խոշոր ծրագրերի իրականացումը Արամյանցը մեծ ճանապարհ է անցնում: Ղարաբաղում ծնված տղան երազում էր սովորել թբիլիսյան ճեմարանում: Երազանքը չի իրականացնում, բայց Թբիլիսի հասնում է՝ 1871 թվականին: Սկսում է զբաղվել մետաքսի եւ բնական բրդի վաճառքով: Հետո միանում է նավթի բիզնեսին եւ 28 տարեկան հասակում պաշտոնապես միլիոնատեր հայտարարվում: Վայելելով մարդկանց սերը, անձնական կյանքում մշտապես անհաջողության առաջ էր կանգնում: Կինը թբիլիսցի վաճառականի դուստր Եղիսաբեթ Շեկոյանցն էր, ով շարունակ դավաճանում էր ամուսնուն: Արամյանցը երկար ժամանակ լուրերին չէր հավատում՝ մինչեւ պատահաբար ձեռքն ընկավ սիրային նամակներից մեկը: Դրանից հետո Արամյանցին սիրո մեջ անհաջողակ էին համարում, ում բախտն այդ հարցում այդպես էլ չժպտաց...



***- Անձնական կյանքում շատ անհաջողությունների ու դժբախտության հանդիպեց՝ լինելով շատ ու շատ բարի գործերի հեղինակ, ում անունը Թբիլիսին հիշում է որպես բարեգործի: Հենց միայն Թբիլիսիի, փաստորեն, գլխավոր հիվանդանոցը՝ առ այսօր ոչ միայն թբիլիսցիների, այլեւ ողջ Վրաստանի բնակչության շրջանում «Արամյանցի հիվանդանոց» անվամբ է հայտնի: Արամյանցի շնորհիվ ու օժանդակությամբ բուժումն այստեղ բացարձակապես անվճար էր: Նա հիվանդանոց էր բերել նաեւ Կովկասում նախադեպը չունեցող Ռենտգենի սարքը,- շեշտում է Զ.Բալանչիվաձեն:***

Արամյանցի հիվանդանոցն ամենահայտնի շինությունն է, որ կապվում է Մեկենասի անվան հետ: Այն կառուցելու համար Արամյանցը տրամադրել էր 100 հազար ռուբլի՝ մարդկանց նվիրելով թերեւս ամենաանհրաժեշտը: Այդուհանդերձ, Թբիլիսիում զբոսնելով, Արամյանցի անվանը կապված էլի շատ ու շատ կառույցների կհանդիպես:

***- Շինություններից մեկը՝ ճարտարապետ Ալեքսանդր Օզյորովի նախագծմամբ է կառուցվել, հատուկ Արամյանցի համար ու պատվերով: Ճարտարապետական ոճը գերմանական է, այսպես կոչված բավարիական, բայց հենց կենտրոնում, թագավորական վրացական ոճի պատշգամբ է: Եզակի համադրություն է...***

Արամյանցի այս տան հետկողմյան ճակատն այլեւս նման չէ հնին: Բախտը ժպտում է մեզ, եւ տանտիրուհին տուն է հրավիրում:

***- Կարելի՞ է...***

Նույնիսկ տարիներ անց զգացվում է այս շինության եզակիությունը: Տանը պահպանվել են հին ճաղեր, առարկաներ եւ դրանցից մեկը մի յուրահատուկ բաժակ է, որ տանտիրուհին ձեռք է բերել հարեւանուհուց.

***- Ասաց, որ Արամյանցինն է,- ժպտում է կինը,- ճիշտ, թե սուտ՝ հավատացի, գնեցի ու խնամքով պահում եմ:***

Տան ելքի մոտ մի շատ հետաքրքիր նկարի ենք հանդիպում: Կտավին Արամյանցն ու նրա սիրելին՝ Եվգենյա Շխիյանցն են: Թբիլիսցի գեղեցկուհուն բարեգործը սիրեց կնոջից բաժանվելուց հետո: Այս պատմությունը Թբիլիսիի քաղաքաշինությանն էլ անդրադարձավ: Մի փոքրիկ փողոցի վրա՝ Կոստավայից դեպի Թոիձե գնացող, բարձունք կա՝ Եվգենյայի բարձունք հայտնի անվամբ:

***- Մենք հիմա հենց այդ բարձունքով ենք քայլում,- պատմում է Զուրաբ Բալանչիվաձեն,- Այդ լեգենդար կինը Արամյանցի երկրորդ սերն էր: Նրանք միասին տասնչորս տարի ապրեցին: Արամյանցը Եվգենյային որպես իր կին էր ներկայացնում, թեեւ պաշտոնապես ամուսնացած չէին: Այս բարձունքը տանում էր դեպի Եվգենյա Շխիյանցի տուն: Երեւի շատերը չգիտեն, որ Թորաձե փակուղու թիվ 3-ում կանգնած այս եռահարկ կառույցը Արամյանցն իր սիրելի կնոջ պատվին էր կառուցել:***

Տանից այսօր փայտե պատշգամբն է մնացել՝ վրան նախշազարդը: Տասնչորսամյա սիրային պատմությունն ավարտվեց կրկին դավաճանությամբ՝ Եվգենյան դավաճանեց իրենց տան բժշկի հետ: Մեկենասի անհարթ կյանքը կինոնկարի սյուժե կարող էր դառնալ...

Մի բան, որ հաստատ էր Մեկենասի կյանքում, Թբիլիսին Կովկասի ամենագեղեցիկ քաղաքը տեսնելու ցանկությունն էր: Նրա նյութական աջակցությամբ Թբիլիսիում մի շարք շինություններ վերանորոգվեցին ու կառուցվեցին, այդ թվում՝ մեր օրերի Թբիլիսիի թատերական համալսարանը, որը նախկինում Ամփոստատ կինոթատրոն անվամբ էր հայտնի:

Նման հարուստ կենսագրություն ունեցող Միքայել Արամյանցը չէր էլ պատկերացնի, որ կյանքը հակառակ ավարտը կունենար: Վրաստանի սոցիալ-դեմոկրատական կառավարությունը բռնագանձեց Մեկենասի բոլոր հյուրանոցներն ու տները: Կյանքի մայրամուտին, նախկին Սերգիի, այժմ՝ Մաչաբելիի թիվ 4 հասցեում մի փոքրիկ նկուղ մնաց միայն...

Մինչեւ մահ, Մեկենասին հաճախ տեսնում էին Մաժեստիկի մոտ նստած՝ հյուրանոցը դրսից փայփայելիս ու պատերը շոյելիս: Երեւի մտածում էր երանելի ժամանակների մասին...»:

*Պատրաստեց ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԸ*

ԲԱԹՈՒՄԻ

# ՏԵՐ ԱՐԱՐԱՏ ԳՈՒՄԲԱԼՅԱՆ. «ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉԸ ԿՎԵՐԱՕԾԵՆՔ ՄԵԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՄԲ»



***Բաթումիի հայկական եկեղեցու վերանորոգումն ամբողջովին ավարտված է, սակայն համավարակի պատճառով վերաօծման արարողության օրը հստակ չէ: Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Արարատ Գումբալյանը մեզ հետ զրույցում այդուհանդերձ հույս է հայտնել, որ այս տարի, երբ սահմանները բացվեն, մեծ հանդիսությամբ կվերաօծվի այն:***

Աջարիայի ծովափնյա Բաթումի քաղաքում գործող միակ հայկական եկեղեցին՝ Սուրբ Փրկիչը, այս տարի օծման 120-ամյակի առիթով ամբողջությամբ ամրակայվել ու վերանորոգվել է: 1887 թվականին, նույն տեղում ավելի վաղ (1879-ին) հիմնադրված փայտաշեն եկեղեցու հիմքի վրա կառուցված եկեղեցին առաջին անգամ է ամբողջությամբ վերանորոգվում:

Տարեսկզբից սկսված վերանորոգման աշխատանքներն իրականացվել են տեղի հայ համայնքի ջանքերով՝ մոտ 400 ընտանիք է մասնակցել: 20-րդ դարի դժվարին 90-ականներին, տեղի իշխանության եւ հայ համայնքի աջակցությամբ, 30-ականներից չգործող եկեղեցին, որի շենքը ծառայում էր որպես «Պլանետարիում» (Աստղադիտարան), վերադարձվեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմին:

«Սա մեր եկեղեցին է, մենք սերնդե-սերունդ պիտի այն փոխանցենք, պահենք, պահպանենք:»:

Տեր Արարատ Գումբալյանն ավելի քան տասը տարի հոգեւոր ծառայություն է իրականացնում այս տարածաշրջանում, առանձնացնում է մի կարեւոր ձեռքբերում՝ Բաթումիի ռուսախոս հայությունը սկսել է հայերեն խոսել:

«Հիմա փորձում ենք վերականգնել հայախոսությունը, մեծ աշխատանք ենք սկսել այդ ուղղությամբ: Մեր հիմնական ծրագիրը երկու լեզուների մեջ է՝ հայերենի եւ վրացերենի, այս երկու լեզուներով պետք է համայնքը շարունակի ապրել ու զարգանալ»:

Հենց այդ նպատակով, Աջարիայի հովվության նախաձեռնությամբ եւ «Վրաստան» թերթի աջակցությամբ, բացվեց Վրաստանում նախադեպը չունեցող հայ-վրացական դասարանը Բաթումիի վրացալեզու հանրային դպրոցներից մեկում, որտեղ արդեն երրորդ տարին է՝ աշակերտները հնարավորություն ունեն՝ առաջինից տասներկուերորդ դասարան պարտադիր ուսումնասիրել նաեւ հայոց լեզուն եւ գրականությունը:



«Մենք պիտի լինենք Վրաստանի լիարժեք քաղաքացիները, լիարժեք պիտի տիրապետենք լեզվին, որովհետեւ մենք այս երկրի շատ կարեւոր, անփոխարինելի մասն ենք: Բայց դրա հետ մեկտեղ, պիտի մնանք հայ՝ պահպանելով մեր լեզուն, մշակույթը, պատմությունը, ակտիվ լինելով նաեւ համահայկական բոլոր միջոցառումներում»:

Աջարիան, Բաթումին, որտեղ միահյուսվում են քաղաքակրթություններն ու մշակույթները, ըստ Արարատ Գումբալյանի, միշտ հանդուրժող են եղել ամեն հարցում:

*ԳԻՏԱ ԷԼԻԲԵԿՅԱՆ*

***Խմբագրության կողմից. Այս օրերին Տեր Արարատ Գումբալյանը նշեց իր ծննդյան տարեդարձը, որն այս տարի արժանապատիվ հոգեւորականի կյանքում առանձնացավ երրորդ՝ արու զավակի ծնունդով: «Վրաստան» թերթը ջերմորեն շնորհավորում է՝ մաղթելով երջանկություն սիրելի ընտանիքի շրջապատում, ինչպես նաեւ աստվածահաճո ծառայություն՝ ի նպաստ ազգի եւ եկեղեցու:***

ՆՈՐՈՒՅԹ

## TBC-Ն ՄԻԱՆՈՒՄ Է ՀԻՊՈԹԵԿԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ

***2020 թվականի հուլիսի 1-ից TBC-ն միացավ հիպոթեկային վարկերի սուբսիդավորման պետական ծրագրին, որը պետությունը սկսել էր դեւելոպերային եւ շինարարական հատվածների աջակցության համար, եւ որի հիպոթեկային վարկի տարեկան տոկոսադրույքը նախատեսում է 4 տոկոսի համաֆինանսավորում` հինգ տարվա ընթացքում:***




Նախագծին մասնակցելու համար սպառողը դեւելոպերային ընկերությունից բնակարանի համար հիպոթեկային վարկից պետք է օգտվի մինչեւ տարեվերջ: Նպաստի ստացման համար դիմում ներկայացնելու վերջնաժամկետը դեկտեմբերի 31-ն է, իսկ պետական երաշխիքային բաղադրիչից օգտվելու վերջնաժամկետը` դեկտեմբերի 20-ը: Գումարի առավելագույն չափը կազմում է 200 հազար լարի, իսկ վարկի մարման ժամկետը` 240 ամիս: Սպառողը ապահովագրման տեսքով պետք է ներկայացնի գնվող գույքի առնվազն 10 տոկոսի դրամական գումարը: Բացի այդ, համամասնակցությունը պետք է հաստատվի փաստավորված: Նախագիծը տարածվում է միայն ազգային տարադրամով վարկերի վրա:

Գործընկեր դեւելոպերային ընկերությունները բնակարան գնելու դեպքում, TBC-ի հիպոթեկային կենտրոնը կարգավիճակային սպառողներին առաջարկում է բացառիկ պայմաններ եւ արտոնություններ:

- TBC-ի համար շինարարական եւ դեւելոպերային հատվածների աջակցությունն առաջնահերթային ուղղություններից մեկն է: Բանկի ներդրումները վերոնշյալ հատվածներում միայն 2019 թվականի հուլիսից մինչեւ 2020 թվականի հունիսը գերազանցել է 721 միլիոն լարին: Հետեւաբար, մեզ համար ողջունելի է ցանկացած նախաձեռնություն, որն ուղղված է այդ հատվածների զարգացման խրախուսմանը: Հիպոթեկային վարկերի սուբսիդավորման պետական ծրագիրը մի կողմից սպառողներին կօգնի գնել ցանկալի բնակարան, իսկ մյուս կողմից` կնպաստի դեւելոպերային ոլորտի զարգացմանը: Բացի այդ, շինարարական ոլորտը սերտորեն կապված է մյուս ոլորտների հետ, ուստի գտնում ենք, որ վերոնշյալ նախաձեռնությունը նշանակալիորեն կխրախուսի ինչպես դեւելոպերային, այնպես էլ` մյուս հատվածների հաջող գործունեությանը,- ընդգծեց TBC-ի բանկի գլխավոր տնօրեն Վախթանգ Բուցխրիկիձեն:

Հիպոթեկային վարկերի սուբսիդավորման ծրագրի վերաբերյալ մանրամասն տեղեկություն կարելի է ստանալ TBC-ի https://www.tbcbank.ge/web/ka/tbc-joins-subsidzation-program կայքէջում (032) 2 27 27 27 թեժ գծով, ինչպես նաեւ` Վրաստանի ողջ տարածքով բանկի ցանկացած մասնաճյուղում:

ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎՏՈՎԹԱՐԻ ԶՈՀ Է ԴԱՐՁԵԼ 134 ԵՎ ՄԱՐՄՆԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔ ՍՏԱՑԵԼ` 1610 ՄԱՐԴ

***Վրաստանի ներքին գործերի (ՆԳ) նախարարությունը հրապարակել է ընթացիկ տարվա ավտոճանապարհային պատահարների վիճակագրությունը, ըստ որի, այն շարունակում է մնալ ամենահրատապ հիմնախնդիրներից մեկը:***

Ինչպես նշված է ՆԳ նախարարության հաղորդագրության մեջ, Վրաստանում տարեցտարի ավելանում է ավտովթարների զոհերի եւ մարմնական վնասվածք ստացողների թիվը: Հաղորդագրության համաձայն, ընթացիկ տարվա առաջին երեք ամիսների ընթացքում ավտոտրանսպորտային միջոցի շահագործման կամ երթեւեկության կանոնների խախտման համար, քրեական օրենսգրքի 276-րդ հոդվածով, երկրի ողջ տարածքով հարուցվել է 1236 գործ, որից համարյա կեսը, 600-ը` Թբիլիսիում: Հաշվետու ժամանակահատվածում ավտոճանապարհային պատահարի զոհ է դարձել 134 մարդ, այդ թվում 33-ը` հետիոտն: Ելնելով այս տագնապալի վիճակագրությունից` զոհերի թվով առաջին տեղում են Իմերեթիի, Ռաճա-Լեչխումիի եւ Քվեմո Սվանեթիի տարածաշրջանները: Հաշվետու ժամանակահատվածում, վերոնշյալ տարածաշրջաններում զոհվել է 32 մարդ: Այդ տխուր ցուցակում 25 զոհ միայն Թբիլիսիում է գրանցվել, 18 մահվան դեպք է վավերացվել Շիդա Քարթլիի տարածաշրջանում, Աջարիայում` 8, Քվեմո Քարթլիում` 13, Սամցխե-Ջավախեթիում` 4:

Ինչ վերաբերում է ավտովթարների արդյունքում տուժվածների թվին, ապա վավերացվել է մարմնական վնասվածքի 1610 դեպք: Ըստ տարիքային ցուցանիշի, տուժվածները 41-60 տարեկան են: Այդ կատեգորիայի քաղաքացիներից տուժվել է 349 մարդ:

Հաղորդագրությունից երեւում է, որ ավտոպատահարների ճնշող մեծամասնությունն ալկոհոլի ազդեցության տակ մեքենայի վարումն է, կամ` արագության գերազանցումը:

2019 թվականի համեմատ, ավտովթարների թիվը որոշակի նվազել է: Ըստ երեւույթին, դա պայմանավորված էր` կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով հաստատված սահմանափակումներին: Նշենք, որ 2019 թվականի ընթացքում վավերացվել է ավտոճանապարհային 5839 պատահար, որի արդյունքում զոհվել է 481 եւ մարմնական վնասվածք ստացել` 7921 մարդ: Համեմատության կարգով նշենք, որ, նախորդ տարիների համեմատ, 2019 թվականին ավտոճանապարհային պատահարների արդյունքում զոհերի թիվն ավելացել է 5 տոկոսով, իսկ պատահարների թիվը` 9,5 տոկոսով, 12 տոկոսով նվազել է մարմնական վնասվածք ստացողների թիվը:

Մեկնաբանելով վերոնշյալ վիճակագրական տվյալները` ավտոտրանսպորտային հարցերով փորձագետ Դավիթ Մեսխիշվիլին հայտարարեց, որ երկրի տարածքում կան, այսպես կոչված, «սեւ կետեր», որտեղ մեծ արագությամբ երթեւեկության դեպքում ավտովթարները հաճախակի են: Դրա հետ մեկտեղ, փորձագետը վտանգավոր ճանապարհահատվածներ է համարում դեպի Թելավի տանող ճանապարհը (Կախեթիի խճուղի), Գոմբորիի լեռնանցքը, Թբիլիսի-Բաթումի մայրուղին, Քութայիսիի հատվածը, իսկ Թբիլիսիում` Սաբուրթալոյի մի շարք թաղամասեր:

***ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ***




ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ՕՆԼԱՅՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ` COVID-19 ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԻ ՖՈՆԻ ՎՐԱ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԵՎ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑՈՎ

***Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետ Լեւան Կակավան, տեսախորհրդատվության ձեւաչափով, հերթական աշխատանքային հանդիպումն անցկացրեց Թուրքիայի առեւտրի փոխնախարար Ռիզա Թունա Թուրագի հետ:***



Հանդիպմանը կողմերն ուշադրություն դարձրին երկու երկրների ռազմավարական գործընկերության ու COVID-19-ի պայմաններում տնտեսական մարտահրավերների ֆոնի վրա անցկացված միջոցառումների իրականացման մեխանիզմների վրա:

- Մեզ համար նշանակալի են հարեւան երկրների հետ բարեկամական եւ թափանցիկ հարաբերությունները: Մաքսային ընթացակարգերի դյուրացման, արդյունավետ վերահսկողության եւ ժամանակի տնտեսման նպատակով, Վրաստանը սերտ համագործակցում է Թուրքիայի հետ: Երկու երկրների միջեւ ցամաքային ուղիով փոխադրվող ապրանքների վերաբերյալ տվյալների փոխանակումն իրականացվում է անընդմեջ պայմանակարգով,- հայտարարեց ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետ Լեւան Կակավան:

Նրա խոսքով, Վրաստանը որպես հուսալի գործընկեր, տարանցիկ միջանցքի շրջանակներում, կարանտինային նորմերի լրիվ պահպանմամբ, իրականացնում է բեռնափոխանակում, իսկ մաքսային սահմանագծում պարենամթերքի եւ բժշկական նշանակության ապրանքների տարանցիկ փոխադրումն իրականացվում է արագ, դյուրացված եւ անխափան պայմանակարգով: Նա թուրքական կողմին շնորհակալություն հայտնեց ակտիվ համագործակցության եւ աջակցության համար:

Տեսախորհրդակցությանը մասնակցեցին նաեւ Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետի տեղակալ Վլադիմիր Խունդաձեն, մաքսային դեպարտամենտի պետ Մամուկա Ջանգուլաշվիլին եւ միջազգային հարաբերությունների դեպարտամենտի պետ Սամսոն Ուրդիան:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

# ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմության մեջ երեք անգամ պաշտոնապես արձանագրվել է, որ ժողովուրդը հանրաքվեով ընդունել է Սահմանադրություն, կամ սահմանադրական փոփոխություններ: Բայց այդ հանրաքվեներից ոչ մեկի արդյունքները վստահելի չեն համարվել հանրության կողմից: Հայաստանի քաղաքացիները իրենցը չեն համարել Սահմանադրություն ընդունելու կամ փոփոխելու որոշումը, իրենցը չեն համարել նաեւ այդ որոշումների արդյունքում ընդունված Սահմանադրությունը:

Ու չնայած, իմ դիրքորոշումը եղել է այն, որ Սահմանադրության համախակի փոփոխությունները անհարկի սթրեսի են ենթարկում պետական համակարգը, Սահմանադրության անընդհատ փոփոխությունները բերում են անորոշությունների, սակայն առանձին հանգամանքների գիտակցումը ինձ բերել է այն եզրակացության, որ մեր երկրին հարկավոր է նոր Սահմանադրություն, որը քաղաքացիների կամքի վրա հենված, քաղաքացիների կամքից բխող պետական կարգ կհաստատի Հայաստանում»,-նշված է վարչապետի ուղերձում:

Ըստ վարչապետի, սահմանադրության փոփոխման գործընթացը մեկնարկած է: Նա հուսով է, որ նոր Սահմանադրության նախագծի ձեւավորումը կանցնի հնարավորինս լայն հանրային քննարկում եւ 2021 թվականին կայանալիք հանրաքվեով կընդունվի ժողովրդի ազատ կամարտահայտմամբ:

# ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆԸ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ Է

*Հայաստանում կորոնավիրուսի հետ կապված իրավիճակը շարունակում է մնալ ծանր: Հուլիսի 7-ին, պարետատանը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ անցկացված նիստում, մանրամասն տեղեկատվություն ներկայացվեց երկրում ստեղծված իրավիճակի մասին:*

Հայաստանի վարչապետի խոսքով, իրավիճակի վերաբերյալ ռազմավարությունը շարունակում է մնալ նույնը, միայն վարչական մեթոդները որեւէ արդյունք չեն կարող տալ:

- Կարող եմ ասել, որ հիմնական խնդիրն այն է, որ քաղաքացիները չեն հավատում անհատական վարքի փոփոխության ազդեցությանն իրավիճակի վրա: Ինձ համար անակնկալ էր, որ բազմաթիվ քաղաքացիներ իրենց շրջապատում չէին արձանագրել վարակի դեպք, եւ սա է՛լ ավելի է բարդացնում մեր խնդիրը,- ասաց Նիկոլ Փաշինյանը եւ ընդգծեց, որ պետք է շարունակել քաջալերել մեր քաղաքացիներին, որ պահպանեն անվտանգության կանոնները, կրեն դիմակ ամենուր, պահպանեն սոցիալական հեռավորություն:

# ԻՆՔՆԱՁԻԳ ՀՐԱՁԵՆԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Հուլիսի 7-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի եւ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանի ուղեկցությամբ, այցելեց Հայաստանում բացված «Կալաշնիկով» ինքնաձիգի արտադրամաս:*



Վարչապետը շրջայց կատարեց «Նեյտրոն ԳԱՄ» ՓԲԸ գործարանի բազայի վրա հիմնված «ԱԿ-103 Կալաշնիկով» ինքնաձիգի հավաքման արտադրամասում՝ ծանոթացավ արտադրական գործընթացին: Շրջայցին մասնակցեց նաեւ Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը:

Վարչապետը տեղեկացվեց, որ արտադրամասում տարեկան արտադրվելու է 50 հազար միավոր ինքնաձիգ: Նախատեսված է նաեւ նանո մանրաթելերի, ինչպես նաեւ՝ նանո մանրաթելից տարբեր իրերի արտադրություն:

Մասնավորապես, այստեղ արտադրվելու են օպտիկա-էլեկտրոնային սարքեր, գիշերային ջերմային նշանոցներ: Ամբողջական փորձարկումից հետո կսկսվի արտադրությունը եւ մեկ տարվա ընթացքում կբավարարի ՀՀ Պաշտպանության նախարարության պահանջարկը:

Հայաստանում ռուսական հայտնի ինքնաձիգի արտադրության համաձայնագիրը ստորագրվել է 2018 թվականի օգոստոսին՝ «Royalsys Engineering ltd.» ընկերության եւ «Կալաշնիկով» կոնցեռնի միջեւ: Արտադրանքի մի մասը կհամալրի ՀՀ Զինված ուժերը, իսկ մյուսը՝ կարտահանվի:

# ԱՐՏԱԲԵՐՎԵՑ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹԸ

*ԱՄՆ Սպիտակ տան մամուլի խոսնակ Քեյլի Մքէնանին, հուլիսի 6-ին, իր ամենօրյա ճեպազրույցում անդրադարձավ Հայոց ցեղասպանության հուշահամալիրին՝ նշելով, որ այն վանդալիզմի զոհ է դարձել:*

Սպիտակ տան պաշտոնական կայքը վկայում է, որ նա խոսել է երկրում ցուցարարների կողմից հուշարձանների ոչնչացման հետեւանքների մասին: Խոսնակը նշել է. որ երեւ թե պատմության վերաբերյալ գրոյական է պատկերացումը, երբ պղծվում են Մաթիաս Բոլդվինի եւ Ջոն Ուիթիերի ու Ուլիսես Ս.Գրանտի արձանները:

- Թվում է, որ հասկանալու եւ պատմական գիտելիքների պակաս կա, երբ Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրը, որը հիշատակում է մարդկության դեմ կատարված բոլոր հանցագործությունների, այդ թվում՝ ստրկության զոհերին, վանդալիզմի է ենթարկվել,- ասել է խոսնակը՝ ակնհայտորեն անդրադառնալով վերջերս Կոլորադոյում Հայոց ցեղասպանության հուշահամալիրի պղծմանը:

Հուշարձանը անցյալ ամիս սոցիալական արդարության բողոքների ընթացքում վանդալիզմի է ենթարկվել՝ այնտեղ գտնվող այլ հուշարձանների հետ միասին:

Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը նշել է, որ այս հայտարարության մեջ կան առաջին քայլերը՝ Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման համար:

# ՆՈՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՑԻ ՊՈՂՈՍ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ



*Հայաստանի վերաքննիչ քրեական դատարանը որոշում է կայացրել բավարարել դատախազության բողոքը եւ, 2001թ. սեպտեմբերի 24-ի լույս 25-ի գիշերը, «Առագաստ» սրճարանում կատարված նինոծմինդացի Պողոս Պողոսյանի սպանության վերաբերյալ քրեական գործը ուղարկել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննություն կատարելու համար:*

Ինչպես տեղեկացրել էինք ավելի վաղ, Երեւան քաղաքի դատախազությունում ուսումնասիրվել էր առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննված Պողոս Պողոսյանի սպանության վերաբերյալ քրեական գործը, Սթիվեն Ջոն Նյուտոնի ներկայացուցիչների դիմումը, դրան կից ներկայացված փաստաթղթերը:

Ելնելով վերոնշյալից՝ Հայաստանի գլխավոր դատախազի տեղակալը 2020 թվականի հունվարի 17-ին բողոք էր ներկայացրել ՀՀ վերաքննիչ դատարան՝ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով վերանայելու եւ ամբողջությամբ բեկանելու 2002թ. փետրվարի 21-ի դատավճիռը՝ գործն ուղարկելով համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Միաժամանակ, դատարանի որոշմամբ Հայաստանի Ազգային անվտանգության նախարարության նախկին աշխատակից Աղամալ Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐԴԻՆ ԶՈՐԱՑՐՎԵՑ



*Հուլիսի 9-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի որդին՝ Աշոտ Փաշինյանն ավարտեց Արցախի Պաշտպանության բանակում իր ծառայությունը եւ վերադարձավ տուն:*

*«Այսօր մեր զինվոր որդին զորացրվեց եւ վերադառնում է տուն: Բարի ծառայություն մեր բոլոր նորակոչիկներին եւ զինվորներին, բարի վերադարձ ծառայությունն ավարտած մեր բոլոր զինվորներին: Ի գիտություն, զորամասի ներսում ժամկետային զինծառայողները դիմակ չեն կրում, որովհետեւ ապրում են մեկ ընտանիքի կանոնով»,- ֆեյսբուքի իր էջում գրանցեց Նիկոլ Փաշինյանը:*

*Հիշեցնենք, որ 2018թ. հուլիսի 9-ին վարչապետ Փաշինյանի որդին առանց վիճակահանության մասնակցելու զորակոչվեց Արցախ:*

## ԸՆԴԳԾՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

*Հուլիսի 8-ին, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը հյուրընկալեց Եվրոպայի խորհրդի երեւանյան գրասենյակի ղեկավար Նատալյա Վուտովային՝ Հայաստանում առաքելությունն ավարտելու կապակցությամբ:*

*Հանդիպմանն ընդգծվեց Հայաստան-Եվրոպայի խորհուրդ գործողությունների ծրագրերի կարեւորությունը եւ դրանց շրջանակներում Հայաստանի տարբեր ոլորտներին ցուցաբերված աջակցությունը:*

## ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՀԵՏՄԱՀՈՒ ՇՆՈՐՀՎԵՑ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄԸ

*Հարգանքի տուրք մատուցելով Մհեր Մկրտչյանի հիշատակին՝ հուլիսի 4-ին՝ մեծանուն դերասանի 90-ամյակին, ծննդավայրում նրան հետմահու շնորհվեց «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչումը: Կոչումը վկայող որոշումն ու հուշամեդալն անչամբ Գյումրու քաղաքապետ Սամվել Բալասանյանը հանձնեց Մհեր Մկրտչյանի հուշատուն-թանգարանին:*

*Գյումրի համայնքի ավագանին հունիսի 10-ին կայացած նիստում միաձայն որոշում էր կայացրել՝ «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչում շնորհել հայ մեծանուն դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Մհեր Մկրտչյանին:*

## ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ԳՈՐԾԸ ՈՒՂԱՐԿՎԵԼ Է ՆՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ

*Հուլիսի 8-ին Հայաստանի վերաքննիչ քրեական դատարանը հրապարակեց «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ղեկավար, պատգամավոր Գագիկ Ծառուկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ որոշման դեմ պաշտպանության կողմի եւ դատախազության բողոքների քննության հիման վրա կայացրած որոշումը: Ըստ դրա, վերաքննիչ դատարանը որոշել է բեկանել առաջին ատյանի դատարանի որոշումը, եւ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:*

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՀՈՒԼԻՍ



***12.07.2020 Բարեկենդան Վարդավառի պահոց***

Վարդավառի՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնին նախորդող շաբաթապահքը Հայ եկեղեցում կոչվում է Վարդավառի պահք: Պահքի վերջին շաբաթ օրը նավակատիք է, այսինքն՝ այդ օրը թույլատրվում է ձկնեղեն եւ կաթնեղեն օգտագործել:

***18.07.2020 Հիշատակ հին տապանակի եւ նոր Սուրբ Եկեղեցու տոն***

Հին Ուխտի տապանակը Հին կտակարանի ամենամեծ սրբությունն է, որտեղ պահվում էին Տասնաբանյա պատվիրանների տախտակները, Ահարոնի ծաղկյալ գավազանն ու մանանայով լի ոսկյա սափորը: Քրիստոնեական եկեղեցու համար այն Նոր Ուխտի, այսինքն՝ Քրիստոսի եկեղեցու նախատիպն է, որի համար սահմանվել է այս տոնը՝ եկեղեցու մշտնջենականության խորհրդով:

Տոնը կատարվում է Վարդավառի՝ Քրիստոսի Պայծառակերպության տոնին նախորդող շաբաթ օրը:

## ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

# ԲՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑՐԱԾ ՎՆԱՍԸ ԿՓՈԽՀԱՏՈՒՑՎԻ ՎՆԱՍՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

საქართველოს გარემოსა და ბუნებრივი რესურსების დაცვის სამინისტრო

*Վրաստանում շրջակա միջավայրին վնաս հասցրած անձը պարտավոր կլինի իր միջոցներով վերացնել վնասի հետեւանքները:*

Կառավարությունը հաստատել է «Բնապահպանության պատասխանատվության մասին» օրինագիծը, ըստ որի՝ Վրաստանում գործող բոլոր ձեռնարկությունները պարտավոր են կրճատել ու վերացնել շրջակա միջավայրին հասցվող վնասը:

Նոր մեխանիզմը ոչ միայն գումարների տեսքով վնասի փոխհատուցում է ենթադրում, այլեւ՝ նախատեսում է վնասի կրճատման միջոցառումներ: Փոխհատուցման համար վճարված գումարն ուղղվում է պետբյուջե. հատուկ ստեղծված հաշվի վրա հավաքված գումարը ծախսվելու է տուժած բնության վերականգման համար:

Բացի այդ, մեծ տուգանքներ են նշանակված այն ձեռնարկություններին, որոնք աղտոտում են մթնոլորտը վնասակար նյութերով:

## ՍՊՈՐՏ

### ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԱՎԱԳԸ ՏԵՂԱՓՈԽՎՈՒՄ Է ՄՈՍԿՎԱՅԻ ԲԿՄԱ



Վրաստանի բասկետբոլի ազգային հավաքականի ավագ Թոռնիկե Շենգելիայի իսպանական «Բասկոնիա» ակումբից Մոսկվայի Բանակի կենտրոնական մարզակումբ (ԲԿՄԱ) տեղափոխվելու փաստը դժգոհության ալիք է բարձրացրել Վրաստանում: Մարզական կյանքի համար սովորական այս տրանսֆերը լայն արձագանք առաջացրեց: Սոցիալական ցանցում վրաց ֆուտբոլիստի հասցեին հնչեցին մեղադրանքներ, որ նա խաղալու է Վրաստանի տարածքի բռնազավթումն իրականացրած երկրի մարզակումբում:

Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, Վրաստանի բասկետբոլի ազգային հավաքականի ավագ Թոռնիկե Շենգելիայի Մոսկվայի «ԲԿՄԱ» անցնելու փաստն անվանել է ցավալի եւ նշել, որ այդ որոշումն իր համար անընդունելի է:

Ինչ վերաբերում է մարզական կազմակերպությունների արձագանքներին, ապա Վրաստանի բասկետբոլի ազգային ֆեդերացիան համոզմունք է հայտնել, որ ինչպես նախկինում, անկախ նրանից, թե որ ակումբում է գործում, Թոռնիկեն միշտ պաշտպանել է եւ կպաշտպանի հայրենիքը եւ ազգային հավաքականի արժանապատվությունը: «Վրաստանի հավաքականի ավագը բազմիցս կուրախացնի մեզ իր հաջող մարզական կարիերայով, եւ նրա գլխավորությամբ Վրաստանի հավաքականը հաստատ հասնելու է նշանակալի հաղթանակների: Հաջողություն Թոկո»,- ասված է ֆեդերացիայի սոցիալական ցանցում տարածված հայտարարության մեջ:

### ՖՈՒՏԲՈԼԻ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ԲԵԺԱՆՈ ԳՅՈՒՂՈՒՄ

Հուլիսի 4-ին Ախալքալաքի մունիցիպալիտետի Բեժանո գյուղում անցկացվեց գյուղի բնակիչ Գագիկ Վանցյանի հիշատակին նվիրված ֆուտբոլային մրցաշար, որին մասնակցելու իրավեր էին ստացել մունիցիպալիտետի 40 գյուղեր: Գյուղի երիտասարդների կողմից կազմակերպված մրցաշարի անցկացման գործում իրենց ֆինանսական ավանդը ներդրեցին ներկայումս Ռուսաստանում ապրող բեժանոցիները: Հետաքրքիր մրցապայքարում մրցաշարի հաղթող դարձավ տեղի թիմը:

### ԽԱՉՔԱՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄՐՑԱՇԱՐ ՄՈՒՐՋԱԽԵԹ ԳՅՈՒՂՈՒՄ

Հուլիսի 5-ին, եւս մեկ ֆուտբոլային մրցաշար անցկացվեց, այս անգամ նույն մունիցիպալիտետի Մուրջախեթ գյուղում: Մրցաշարը նվիրված էր 25 տարի առաջ գյուղում, տրակտորիստի կողմից հայտնաբերված խաչքարին: Սովորաբար հուլիսի առաջին շաբաթ օրը, մուրջախեթցիները մեծ շուքով նշում են Խաչքարի օրը, սակայն այս տարի, կորոնավիրուսի պատճառով, զանգվածային տոնախմբությունը չեղարկվեց եւ բավարարվեցին ֆուտբոլային մրցաշարի անցկացմամբ: Երեք օր տեւած մրցաշարում, որին մասնակցում էին մունիցիպալիտետի տարբեր գյուղերի 30 թիմեր, հաղթող ճանաչվեց Մուրջախեթի թիմը, առաջ անցնելով Գումբուրդոյի եւ Դադեշի թիմերից:

Մրցաշարի հաղթողները պարգեւատրվեցին մեդալներով ու գավաթներով:

---

Սլավա Մելիքիձե-Ջավախի ընտանիքը, այս ծանր ու ցավալի պահին իր վշտակցությունն է հայտնում Արտուշ Համբարձումյանի ընտանիքին, սիրելի մոր, սկեսրոջ, տատի, նախատատի, հարգարժան տիկին՝

*Մայրամ Կարապետի ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ*

մահվան կապակցությամբ: Աստված հոգին լուսավորի:

---

«Վրաստան» թերթի խմբագրությունը իր վշտակցությունն է հայտնում Ախալքալաքի մունիցիպալիտետի վարչության նախկին նախագահ Արտուշ Համբարձումյանին, սիրելի մոր՝

*Մայրամ Կարապետի ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ*

մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

---



«Ագորա Ջորջիա» հասարակական կազմակերպությունը, «Վրաստան» թերթի խմբագրությունը իրենց վշտակցությունն են հայտնում վերոնշյալ կազմակերպության ղեկավար Վիկտորյա Մաքսուեւային, սիրելի մոր, շտապ օգնության ծառայության բազմամյա փորձառու բժիշկ՝

*Աֆյանա Արսենի ՄԱՔՍՈՒԵՎԱՅԻ*

մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի բարեկամներին ու հարազատներին:

---

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Գետային ջրահարս: 9.Կանոնավոր հետեւակ սուլթանական Թուրքիայում: 10.Հարգ, պատիվ: 11.Մետաղի վարպետ: 12.Այս տեսակի: 15.Խաղի ժամանակահատված: 16.Անբավարար գնահատական: 17.Երկար ու սուր ծայրով խոցող սառը զենք: 19.«... Դու» մուլտֆիլմ: 21.Երկրածին, հոմոսապիենս: 24.Հրաբուխ Իտալիայում: 25.Կուտակել, հավաքել: 27.Քաղցր, բարձր կալորիականությամբ սննդամթերք: 28.Ալբանական դրամը: 30.Բանջարեղեն: 34.Գետ Վրաստանում: 35.Ռազմական նավերի միավորում: 38.Անձնական դերանուն: 39.Անստեղծ: 41.Կարմրել, ամաչել: 44.Իշխանություն խորհրդանշող բազկաթոռ: 45.Անորոշ, երերուն: 46.Բակի, մուտքի դուռ: 48.Գունագեղ թռչուն: 49.Շաղկապ: 50.Հանձնարարագիր: 51.Ազգությամբ հայ-ֆրանսիական էստրադայի երգչուհի Քրիստիան ...:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.«Թեհրան-...», ֆիլմ: 2.Նախապես ենթադրում, կանխատեսում: 3.Մետաքսի որդ: 4.Գիպսակերտ: 5.Վիրահայ բանաստեղծ ... Սեյրանյան: 6.Կինոդերասան Բրյուս ...: 8.Պարպվել, անմարդաբնակ դառնալ: 13.Անֆիլտր ծխախոտ: 14.Բոլիվիայի մայրաքաղաքը: 18.Մեսրոպատառ: 20.Հաննիբալի հայրը՝ Համիլկար ... (Կարթագեն): 22.Հայ երգիչ, դերասան: 23.«...-յաման»: 26.XIII դարի վերջի հայ-վրացական պետական գործիչ, զորավար Խութլու ... Արծրունի: 29.Աբեղա, սքեմավոր: 31.Հեղուկ շարակցական հյուսվածքի տարատեսակ: 32.Կարող, ընդունակ: 33.Բրդից գործած: 35.Որեւէ բնագավառի մեջ նոր թափանցել: 36.Լեռ Իսպանիայում: 37.Երկրպագում, դավանում: 40.Անգլիացի գրող ... Քրիստի: 42.Ոդիսեւսի հայրենի կղզին: 43.Լոգարիթմական հարաբերական մեծության արտահամակարգային միավոր: 46.Կծու ապուր: 47.Հայ գուսան:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Ալաշկերտ: 4.Մալագա: 8.Ադանա: 9.Մարշալ: 11.Լինդ: 12.Սեպ: 15.Առասպել: 17.Վեպ: 19.Տրե: 20.Լարիսա: 21.Թրմել: 25.Նաղաշ: 26.Որա: 28.Կին: 29.Դեկոր: 30.Զարե: 33.Իմաստ: 34.Տրեխ: 35.Սեգ: 37.Ֆա: 39.Իդեն: 41.Աֆրոդիտե: 45.Մրիդ: 48.Փափագ: 50.Սրա: 51.Եր: 52.Նամակ: 55.Ցել: 57.Իրան: 58.Ոտք: 60.Աղա: 61.Սասուն: 62.Ելակ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ալմաստ: 2.Շուշի: 3.Տատասկ: 4.Մարսել: 5.Ան: 6.Լալա: 7.Գանգեսս: 10.Լուռ: 13.Երթ: 14.Պերու: 15.Արենի: 16.Լագոդեխի: 17.Վիճակ: 18.Պատարագ: 22.Լանջ: 23.Աշխօր: 24.Հազիր: 27.Րե: 28.Կեսար: 31.Ամ: 32.Րաֆֆի: 35.Սերմ: 36.Ենի: 38.Սիփան: 40.Դմ: 42.Որսկան: 43.Տա: 44.Եփրատ: 46.Դորպատ: 47.Մինաս: 49.Գոց: 53.Միս: 54.Արու: 56.Լակ: 59.Քե:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН” Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445